


**ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ 1996 ԹՎԱԿԱՆԻ
ԴՐՈՒԹՅԱՄԲ**
(վերափոխումների սոցիալական հետևանքների տեսանկյունից)

1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

1.1 1993 թվականին անկման նվազագույն կետն անցնելուց հետո՝ 1994-1996 թթ. նկատվեց Հայաստանի տնտեսության որոշակի աշխուժացում: Եթե 1993-թ. 1990-ի նկատմամբ ՀՆԱ-ն կրճատվել էր ավելի քան 53,0%-ով, ապա հաջորդ երեք տարիներին դրա ծավալի միջին տարեկան հավելանքը կազմեց ավելի քան 6%:

Գծապատկեր 1. ՀՆԱ դինամիկան 1990- 1996թթ.(%)

1.2 Տնտեսության ճգնաժամային վիճակն իր բացասական ազդեցությունն ունեցավ պետական բյուջեի եկամուտների վրա: 1992-1994թթ. ընթացքում բյուջեի եկամուտները (առանց դրամաշնորհների), կրճատվելով, 1994-ին կազմեցին ՀՆԱ-ի 14,3%-ը, 1995-ին՝ 14,29%-ը, իսկ 1996-ին՝ 13,6%-ը:




Գծապատկեր 2. Պետական բյուջեի եկամուտների և ՀՆԱ-ի դինամիկան 1992-1996թթ

1.3 Պետական բյուջեի եկամուտների հարաբերական նվազումն առաջին հերթին արդյունք էր հարկային մուտքերի սակավացման.


դրանք, տարեցտարի նվազելով, 1994-ին կազմել են ՀՆԱ-ի 11,5%, 1995-ին և 1996-ին՝ 10,7%: Այս պարագայում, երբ ՀՆԱ-ի ցուցանիշը 1994-1996թթ. ունեցել է աճի միտում,

իսկ բյուջեի հարկային մուտքերի ու ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ հակառակը (ինչը պայմանավորված չի եղել հարկային օրենսդրության փոփոխություններով), կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի աճն ուղեկցվել է տնտեսության ստվերային հատվածի ընդլայնմամբ:



Դիագրամ 3. Պետբյուջեի հարկային մուտքերի դինամիկան ՀՆԱ-ի նկատմամբ 1992-1996թթ.

1.4 Մակրոտնտեսական իրավիճակն արտացոլող մյուս կարևոր ցուցիչը՝ սղաճը, իր դրսևորման երկու ձևերով էլ (ՍԳԻ և փոխարժեք) ամենաստորին մակարդակին է հասել 1992-1993թթ, երբ գների ազատականացման (հունվար 1992) և նախկին ԽՍՀՄ տնտեսական տարածքի փլուզման պատճառով ռուբլու գոտում գտնվող բոլոր հանրապետություններն, այդ թվում և Հայաստանը, վերապրեցին այսպես կոչված "հիպերինֆլյացիա": Նշված ժամանակահատվածում (1993թ. 1992-ի նկատմամբ) ռուբլու միջին տարեկան փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ-ում ընկավ գրեթե 9 անգամ, իսկ սպառողական գների ինդեքսը 1993-ի դեկտեմբերին 1992-ի դեկտեմբերի համեմատ կազմեց 1096,2%:



Հետագայում, ազգային դրամի ներդրումով (նոյեմբեր 1993), հնարավորություն ստեղծվեց վարել ֆինանսա-դրամական սեփական քաղաքականություն և հնարավորին չափ մեղմել սղաճը: Դա է վկայում ստորև բերված գծապատկերը:

Գծապատկեր 4. Սպառողական գների ինդեքսի և դրամի փոխարժեքի դինամիկան 1994-1996թթ.(ըստ ամիսների)


1.5 Մակրոտնտեսական իրավիճակի փոփոխություններն, անշուշտ հարուցել են բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևորագույն և միջազգայնորեն համադրելի այնպիսի ցուցանիշի համապատասխան ելևէջներ, ինչպիսին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն է: Միջին տարեկան փոխարժեքը վերահաշվարկելու և բնակչության պաշտոնապես չգրանցված (բայց առկա) արտահոսքն անտեսելու դեպքում այն 1992-ին կազմել է 87,8 ԱՄՆ դոլար, իսկ 1996-ին՝ 423,2 ԱՄՆ դոլար:

Սպառողական գների սղաճին զուգահեռ ընթացող ԱՄՆ դոլարի գնողունակության մակարդակի անկումն հաշվի առնելու պարագայում մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի աճն անհամեմատ նվազ նշանակալից է դառնում: Բոլոր դեպքերում ըստ այդ ցուցանիշի Հայաստանը դասվում է թույլ զարգացած երկրների շարքը, ինչն արդեն ինքնին վկայում է աղքատության առկայությունը:

Հայաստանում ծայր առած մասշտաբային աղքատության մեղմացումը, փորձագետների կարծիքով, ավելի շատ պայմանավորված է արտաքին մասնավոր տրանսֆերտներով, քան պակասուրդային պետական բյուջեից վճարվող փոքրածավալ սոցիալական տրանսֆերտներով:

1.6 Քրոնիկական բյուջետային պակասուրդի երևույթը, որ համատարած է անցումային տնտեսությամբ գրեթե բոլոր երկրների համար, չի շրջանցել նաև Հայաստանը:


ՀՀ պետական բյուջեի ամենամեծ պակասուրդը, հաշվարկված թե՛ ծախսերի, և թե՛ ՀՆԱ-ի նկատմամբ, 1993 թ. համապատասխանորեն կազմել է 33,6% և 11,7%: Միջազգային արժույթային հիմնադրամի կողմից տրամադրված կայունացման վարկի և ՀՀ կառավարության ու Կենտրոնական բանկի վարած կոշտ դրամա-



վարկային քաղաքականության (1994-1996թթ.) շնորհիվ բյուջետային պակասուրդը հետագայում թեև կրճատվել, սակայն դեռևս չի հաղթահարվել, կազմելով 1994-ին՝ ՀՆԱ 10,5%, 1995-ին՝ 11%, 1996-ին՝ 9,3%, իսկ 1997-ին՝ մոտ 2,65%:

Գծապատկեր 5. ՀՀ պետբյուջեի պակասուրդը 1993-1996թթ.


1.7 Համապատասխանորեն նվազել են սոցիալական ոլորտի պետական ֆինանսավորման մասշտաբները: Վիճակագրական տվյալները վկայում են, որ 1992-1996 թթ. ընթացքում սոցիալական ոլորտին ուղղված ծախսերի բաժինը բյուջեի ամբողջ ծախսերի ծավալում 1992-1996թթ. նվազել է 38,4%-ից մինչև 20,3%, այսինքն՝ 1,9 անգամ: Եվ դա այն պայմաններում, երբ տնտեսության ֆինանսավորումը (տնտեսավարող սուբյեկտների ուղիղ վարկավորման և, հատկապես, սպառողական գների դոտացիաների տեսքով) 1995-ից ի վեր խիստ կրճատվել է:



Սոցիալական ոլորտի պետական ծախսերի դինամիկան, հաշվարկված ՀՆԱ-ի նկատմամբ, բերվում է գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6. Սոցիալական ոլորտին ուղղված ծախսերի դինամիկան 1992-1996 թթ.

1.8. Հանրապետության ներտնտեսական իրավիճակն ուղղակիորեն կանխորոշել է արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսական փոխհարաբերությունների բընույթը: 90-ական թվականների կեսերին համաաշխարհային շուկայի համակարգում Հայաստանը ներմուծող երկիր է՝ վճարային բացասական հաշվեկշռով: Ընթացիկ հաշվի պակասուրդը 1994-1996 թթ. կազմել է ՀՆԱ-ի մոտ հինգերորդ մասը, իսկ առևտրային հաշվեկշռի պակասուրդը՝ մոտ մեկ երրորդը:




Ստորև բերված գծապատկերում ներկայացված է ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հաշիվների պակասուրդի դինամիկան վերջին երեք տարիների ընթացքում:

Գծապատկեր 7. Վճարային հաշվեկշռի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ 1994-1996 թթ.

1.9 Հանրապետության թե՛ ներքին դժվարությունները և թե՛ արտաքին շուկաներում դեռևս իր ուրույն տեղը չունենալը ծանր անդրադարձան բնակչության կենսամակարդակի վրա:


Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայ ժողովրդի դիմակայության կարևոր գրավականներից էին տարբեր երկրներից և կազմակերպություններից դեպի Հայաստան ուղղվող մարդասիրական օգնությունն ու մասնավոր տրանսֆերտները: Ընդհանուր առմամբ



1994-1996թթ. ընթացքում հանրապետությունը ստացել է ավելի քան 300մլն. ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնություն, որի մեկ երրորդ մասը կազմում է ցորենի, ալյուրի և բրնձի բաժինը, իսկ մնացածը՝ դեղորայքը, հագուստը և այլ սննդամթերքը:

Գծապատկեր 8. Մարդասիրական օգնության ծավալներն ու կառուցվածքը 1994-1996թթ. (ըստ եռամսյակների՝ աճման մեթոդով)

1.10 Հայաստան ուղղվող մասնավոր տրանսֆերտներն ու դրամական փոխանցումներն ունեն իրենց պատմատնտեսական հիմքերը: Դրանցից մեկը Սփյուռքի առկայությունն է, որի ձևավորումը գլխավորապես տեղի է ունեցել XX-րդ դարի սկզբին՝ Արևմտյան Հայաստանի բնաջնջումից կամ կոմունիստական ռեժիմից փախած հայկական ընտանիքների հիման վրա: Հարկ է նշել, որ 1988-1993 թթ. տեղի ունեցած



զանգվածային արտագաղթի նոր հոսքը, արդեն Արևելյան Հայաստանից, կապված էր Ղարաբաղյան հակամարտության և հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացման հետ: 1994-1996թթ. հին և նոր սփյուռքահայության կողմից պաշտոնական ուղիներով իրենց բարեկամներին, հարազատներին ու ընկերներին ուղարկվող վիճակագրորեն ուսումնասիրված դրամական և այլ օգնությունը ամենամեծ ծավալներին հասավ 1996-ին՝ կազմելով գրեթե 67,5 մլն. ԱՄՆ դոլար, կամ բոլոր մասնավոր տրանսֆերտների 96,5% :

Գրամական մուտքերի հիմքում ընկած է աշխատանքային միգրացիան, հատկապես սեզոնային արտագնա աշխատանքներից ստացված եկամուտները: Սեկնածների կողմից իրենց ընտանիքների բյուջեները “մուտքագրված” գումարները 1996թ. կազմել են ընդամենը 54,44 մլն. ԱՄՆ դոլար:

Այսպիսով՝ Հայաստանի տնտեսությունը նախորդ երկու տարիների փոքր-ինչ աշխուժացումից հետո 1996-ին հայտնվեց պետական կարգավորման լուրջ խնդիրների առջև, երբ տնտեսության աճը չէր անդրադառնում պետական սոցիալական քաղաքականության բարելավման վրա, ֆիսկալ քաղաքականությունը զիջում էր արդեն իսկ իր թույլ դիրքերը, իսկ բնակչության կենսամակարդակի բարձրացման խնդիրն իր յուրովի լուծումներն էր ստանում ավելի շուտ ընտանե-բարեկամական, բարեգործական, քան պետական մակարդակում:

ՆԵՐԳԻՐ 1. Բարեգործական կազմակերպություններ

Չնայած ծանր տնտեսական պայմաններին, հանրապետության ներսում նույնպես ստեղծվեցին բարեգործական կազմակերպություններ, որոնց քանակն, ըստ ՀՀ Արդարադատության նախարարության գրանցումների, 1996-ի տարեվերջին հասավ 276-ի, սակայն իրականում գործել են դրանց 10%-ից էլ պակաս քանակը: 1996թ. տարեվերջին ամենախոշոր բարեգործական կազմակերպությունը “Հայաստան” համահայկական հիմնադրամն է, որի գումարները գոյանում են ողջ հայության նվիրատվություններից: Ստեղծվելով 1992-ին՝ հիմնադրամը բացի շինարարական խոշոր ազգային ռազմավարական ծրագրերից, իրականացնում է մաս գուտ բարեգործական նպատակներով ֆինանսավորում, որոնցից ամենատևականը գոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին ամսական նպաստի տրամադրումն է: Միայն այս ուղղությամբ 1996թ. ծախսվել է 541 հազ. ԱՄՆ դոլար:


2. Տնտեսական և սոցիալական բարեփոխումներ. ընդհանուր ակնարկ

Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների հիմքերը դրվեցին հինգ կարևորագույն՝ “ՀՀ սեփականության մասին”(1990), “ՀՀ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին”(1991), “ՀՀ ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին”(1992), “ՀՀ ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին”(1992) և “ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին” (1993), օրենքների ընդունումով:

2.1 **Հողի սեփականաշնորհումով** Հայաստանում սկիզբ դրվեց զանգվածային սեփականաշնորհման գործընթացին: Այն սկսվեց 1991թ. փետրվարից և ընդգրկեց հողն ու նախկինում գործող կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների գույքը (անասունը, գյուղտեխնիկան, կառույցները և այլն):

Ինտենսիվության տեսակետից սեփականաշնորհման գազաթնակետը համարվեց 1991թվականը, որի ընթացքում 800-ից ավելի կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների փոխարեն ձևավորվեցին մոտ 300 հազար անհատական և շուրջ 10 հազար նոր տիպի կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ: Վերջիններին սեփականաշնորհվեց հանրապետության բոլոր գյուղատնտեսական հողատեսքերի (առանց արոտավայրերի) 49,4%, այդ թվում՝ վարելահողերի 68,2%, բազմամյա տնկարկների 63,1%, խոտհարքների՝ 47,8%: Նույն տարում գյուղացիական տնտեսություններին սեփականաշնորհվեց խոշոր եղջրավոր անասունների գրեթե 80%-ը (այդ թվում կովերի՝ 73,1%, խոզերի՝ 20,8%, ոչխարների և այծերի՝ գրեթե 81%-ը):


Գծապատկեր 9. Գյուղատնտեսական հողատեսքերի սեփականաշնորհումն 1991-1996 թթ առ 1-ը հունվարի (հազար հեկտար)



Հողի սեփականաշնորհումը շարունակվեց նաև 1992-1996թթ. (տես գծապատկերներ 9 և 10) և 1997թ. հունվարի 1-ի դրությամբ անհատական գյուղացիական տնտեսությունների թիվն ավելացավ և հասավ 319,3 հազարի, կոլեկտիվ տնտեսություններինը նվազեց, հասնելով 273-ի:

Գծապատկեր 10. Անասնազվաքանակի սեփականաշնորհումը 1991-1996 թթ. առ 1-ը հունվարի (հազար գլուխ)

1996թ. տարեվերջին Հայաստանի գյուղատնտեսությունը բնութագրվում է որպես փոքր չափերի (միջին հաշվով 1,4 հեկտար հողատեսքով և 6-8 տեսակի արտադրանք թողարկող) հիմնականում անհատական գյուղացիական տնտեսությունների հիման վրա ձևավորված ՀՆԱ-ի ավելի քան մեկ երրորդն ապահովվող ոլորտ, որտեղ զբաղված էին



հանրապետության աշխատանքային ռեսուրսների 41%-ը և որի արտադրանքի մոտ 67%-ն ուղղվում էր սեփական կարիքների բավարարմանը:

2.2 Ձեռնարկությունների սեփականաշնորհումը հանրապետությունում սկսվեց 1991-1992 թթ. 335 “փոքր” օբյեկտների (առևտրի, հասարակական սննդի և կենցաղսպասարկման ոլորտների) փորձնական սեփականաշնորհումով, որն օրենքի բացակայության պայմաններում իրականացվեց ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա:

1992 թ. օգոստոսին ընդունված “Պետական ձեռնարկությունների ու անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին” ՀՀ օրենքի և դրա հետագա լրացումների հիման վրա 1993-ից թափ առավ նաև “մեծ” սեփականաշնորհումը, որի առաջին քայլը 1100 խոշոր և միջին արդյունաբերական ձեռնարկությունների գույքի արժեքի 20%-ի անհատույց սեփականաշնորհումն էր աշխատանքային կոլեկտիվներին: Հետագայում այդ ձեռնարկություններն աստիճանաբար վերածվեցին գերազանցապես բաց բաժնետիրական ընկերությունների:

1994-1997թթ. ընթացքում սեփականաշնորհվել են ընդհանուր առմամբ 1252 խոշոր և միջին ձեռնարկություններ և 6021 փոքր ձեռնարկություններ (տես աղյուսակ 1): 1998 թ. հունվարի 1-ի դրությամբ սեփականաշնորհվել է 60 մլրդ դրամի արժեքի չափ գնահատված գույք, որի դիմաց վճարումներում մարվել է ՀՀ բոլոր քաղաքացիներին անվճար կարգով մեկեկան բաշխված՝ 20 հազար դրամ անվանական արժեքով սեփականաշնորհման հավատագրեր:

Աղյուսակ 1. Սեփականաշնորհման ընթացքը 1991-1997թթ.

Սեփականաշնորհվել է	1991-1992	1994	1995	1996	1997	Ընդամենը
փոքր ձեռնարկություններ	335	257	1574	2132	2058	6356
խոշոր և միջին ձեռնարկություններ	0	0	236	619	397	1252

Սեփականաշնորհման օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր ձեռնարկություններն առաջնահերթ առաջարկվում էին աշխատանքային կոլեկտիվներին, իսկ նրանց հրաժարվելու դեպքում՝ հանվում աճուրդի: 1994-1997թթ. աշխատանքային կոլեկտիվներին են սեփականաշնորհվել փոքր ձեռնարկությունների համարյա 97%: Դրանց մեկ երրորդն առևտրի ձեռնարկություններ են, 11,4%-ը՝ հասարակական սննդի, 20,2%-ը՝ կենցաղսպասարկման, 32,2%-ը՝ նախկինում վարձակալված ձեռնարկություններ:

“Խոշոր” սեփականաշնորհումը հիմնականում ընթացել է ձեռնարկությունների բաժնետիրացման ուղով: 1995-1997թթ. սեփականաշնորհված ձեռնարկությունների 75,4% վերածվել են բաց բաժնետիրական ընկերությունների, 9,6%՝ փակ բաժնետիրական ընկերությունների, 11%-ի գույքը վաճառվել է վարձակալներին, իսկ մնացածը վաճառվել են աճուրդով կամ մրցույթով: Սեփականաշնորհման գործընթացի ծավալումը 1994-1997թթ. հանգեցրեց տնտեսության ոչ պետական հատվածի զգալի մեծացմանը, որի վկայությունը պետական ռեզիստրում գրանցված տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունն է՝ ըստ սեփականության ձևերի և կազմակերպա-իրավական տեսակների (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ պետական ռեզիստրում գրանցված տնտեսավարող սուբյեկտների քանակը (յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ)


	1995թ.	1996թ.	1997թ.
Ըստ սեփականության ձևերի			
Պետական սեփականություն	535	2353	2795
Կոլեկտիվ սեփականություն	3346	13611	18481
Քաղաքացիների սեփականություն	1098	3805	6461
Խառը սեփականություն	18	1072	1414
Օտարերկրյա սեփականություն	40	191	305
Համատեղ ձեռն-րի սեփականություն	52	206	380
Ըստ կազմակերպա-իրավական տեսակների			
Անհատական ձեռնարկություն	839	3197	5686
Ընտանեկան ձեռնարկություն	106	342	539
Լիակատար տնտեսական ընկերակցություն	303	1459	1916
Կոմանդիտային տնտեսական ընկերակցություն	2	9	15
Չեռնարկության առանձնացված ստորաբաժանում	21	102	163
Դուստր ձեռնարկություն	259	1723	2123
Արտադրական կոոպերատիվ	986	4621	5633
Սպառողական կոոպերատիվ	3	14	49
Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն	39	208	268
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկ.	2092	7102	10294
Փակ բաժնետիրական ընկերություն	67	1001	999
Բաց բաժնետիրական ընկերություն	5	146	489
Պետական ձեռնարկություն	367	1314	1662
Ընդամենը	5089	21238	29836
Անհատ ձեռներեցներ	7048	18846	26949

ՀՀ տնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների կազմի 1997թ. ձևավորված վիճակագրական պատկերը փաստում է, որ այն հիմնված է սեփականության և կազմակերպա-իրավական տեսակների բազմազանության վրա, ինչը կարևոր ձեռքբերում էր ազատական տնտեսակարգի հիմքերի ստեղծման գործում: Տնտեսավարող սուբյեկտների 80%-ը մինչև 10 մարդ աշխատակազմ ունեցող փոքր ձեռնարկություններն են, մոտ 40 հազարը՝ անհատ ձեռներեցներ: Տնտեսությունում զբաղվածների (բացի գյուղատնտեսությունից) մոտ մեկ երրորդն աշխատում էր խոշոր (500 և ավելի մարդ) ձեռնարկություններում, որոնց թիվը չէր գերազանցում բոլոր զբանցված տնտեսավարող սուբյեկտների թվի 2%-ը:

2.3 Բնակարանների սեփականաշնորհումն ամենակարևոր պետական միջոցառումն էր սոցիալական ոլորտում: Այն իրականացվեց 1990 թ. սկսած, երբ համապատասխան կառավարական որոշումով բնակիչներին թույլ տրվեց գնել իրենց բնակարանները: Բնակարանների սեփականաշնորհման գործընթացն իր գագաթնակետին հասավ 1994-ին, երբ սկսվեց պետական բնակարանային ֆոնդի անվճար սեփականաշնորհումը:

Գծապատկեր 11. 1990-1997թթ. ընթացքում սեփականաշնորհված բնակարանների քանակը

Բնակարանների սեփականաշնորհման գործընթացը ծավալվեց բավականին արագ և 1997թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսի 86,5%-ն արդեն մասնավորեցված էր:



Աղյուսակ 3. ՀՀ բնակարանային ֆոնդի կառուցվածքը ըստ սեփականության ձևի (1997թ. հունվարի 1-ի դրությամբ)

Ցուցանիշները	Չափման միավորը	Ընդամենը	այդ թվում՝ մասնավոր սեփականություն			
			բացարձակ	%-ով ընդամենի մեջ		
1. Հանրապետության բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսը. այդ թվում՝	հազ. քառ. մ	57929.0	50097.2	86.5		
ա) քաղաքներում					34663.2	81.2
բ) գյուղերում					23265.8	94.4
2. Հանրապետության բնակարանների թիվը. այդ թվում՝	հատ	752469	630834	83.8		
ա) քաղաքներում					497476	79.4
բ) գյուղերում					254993	92.5

Հանրապետության առկա բնակելի ֆոնդի բնութագիրը փոխվել է հետևյալ կերպ. 1990-1996 թթ. և 1997 թ. 9 ամիսների ընթացքում սեփականաշնորհվել են 306482 պետական բնակարաններ, կամ պետական բնակարանների 77,3%; մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով (անկախ սեփականության ձևից) կազմել է 15,3 քառակուսի մետր, այդ թվում՝ քաղաքային մեկ բնակչի հաշվով 13,7 քառ. մ, գյուղական՝ 18,6 քառ.մ: Քաղաքային բնակելի ֆոնդն ապահովված է ջրմուղով 99%-ով, կոյուղով՝ 98%-ով:

3. ՀՀ մարզերի տարածքային կառավարման բարեփոխումներ

Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հեռագնա լուծումն անմիջականորեն պայմանավորված է տարածքային կառավարման կառուցվածքի, տարածքային մարմինների լիազորությունների հստակ սահմանմամբ: 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված “Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին” ՀՀ օրենքով սահմանված բարեփոխումների հետևանքով ՀՀ վարչատարածքային բաժանումն էական փոփոխություններ կրեց: Երկրի 37 շրջանների ու 4 քաղաքների հիման վրա ձևավորվեցին 11 մարզեր: 1997թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում կային 48 քաղաքներ (այդ թվում Երևանը՝ մարզի կարգավիճակով) և 952 գյուղեր, որոնցից 8-ը մտած էին քաղաքային համայնքների կազմի մեջ, իսկ մնացածները ներգրավված էին 871 գյուղական համայնքներում:

ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական կացությունը բավական տարբեր է (տես աղյուսակ 4), ուստի և տարբեր են դրանցում ծառայած առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները: Ստորև ներկայացված է ՀՀ մարզերի ավելի մանրամասն նկարագիրը:

3.1 **Արագածոտնի մարզը (կենտրոնը՝ ք.Աշտարակ)** իր մեջ ներառում է 3 քաղաքներ և 116 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 9,3%, բնակչության 72% բնակվում է գյուղական վայրերում (գյուղական բնակչության ամենաբարձր տոկոսն է հանրապետության մարզերի կտրվածքով):

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են 934 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 1092 անհատ ձեռներեցներ: Չեռնարկությունների 87%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (75%) օբյեկտներ են:

3.2 **Արարատի մարզը (կենտրոնը՝ ք.Արտաշատ)** ընդգրկում է 4 քաղաք և 94 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 7%-ը, բնակչության 68%-ը բնակվում է գյուղական վայրերում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 1535 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 3131 անհատ ձեռներեցներ: Չեռնարկությունների 87%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (77%) օբյեկտներ են:

Աղյուսակ 4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառուցվածքը 1996 թվականին (ըստ հիմնական սոցիալ-տնտեսական բնութագրերի, % ամբողջի մեջ)

Մարզեր	Բնակչության թվաքանակը	Տնտեսապես ակտիվ բնակչությունը	Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը	Պետ.ռեզիստրում գրանցված տնտեսավարող սուբյեկտների քանակը (տարեվերջին)	Գյուղացիական տնտեսությունների քանակը (տարեվերջին)	Բնակելի ֆոնդը	Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունները	Դպրոցների թիվը	Հիվանդանոցների թիվը	Գրանցված հանցագործությունները
Արագածոտն	4.3	5.7	0.9	2.9	10.9	5.6	1.0	8.6	3.0	3.4
Արարատ	8.1	9.1	5.8	4.7	16.0	8.7	2.0	8.1	4.1	5.0
Արմավիր	8.4	9.0	6.4	5.3	15.9	9.2	0.8	8.5	5.9	4.7
Գեղարքունիք	7.3	8.1	5.5	5.9	13.5	7.5	1.2	9.1	7.1	7.4
Լոռի	10.4	9.1	12.0	6.9	10.4	10.0	2.7	12.2	13.6	10.7
Կոտայք	8.7	8.7	8.0	8.5	10.2	8.5	2.2	8.0	5.3	6.3
Շիրակ	9.5	9.3	19.7	4.9	8.1	7.9	6.4	12.4	13.6	10.0
Սյունիք	4.3	4.3	7.0	5.4	3.4	5.1	1.4	8.5	10.1	4.3
Վայոց Ձոր	1.8	2.4	1.6	1.3	4.4	2.0	0.3	3.6	3.6	16.4
Տավուշ	4.1	4.8	4.2	2.8	7.0	5.1	1.1	5.8	5.9	5.2
ք. Երևան	33.1	29.5	28.9	51.6	0.2	30.4	80.9	15.2	27.8	26.6

3.3 **Արմավիրի մարզը (կենտրոնը՝ ք.Արմավիր)** ընդգրկում է 3 քաղաք և 95 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 4,2%, բնակչության մոտ 62% բնակվում է գյուղական վայրերում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 1746 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 2027 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 88%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (76%) օբյեկտներ են:

3.4 **Գեղարքունիքի մարզը (կենտրոնը՝ ք. Գավառ)** ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 18% (ամենախոշոր մարզն է ըստ տարածքի), բնակչության 63% բնակվում է գյուղական վայրերում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 2005 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 1182 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 89%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (79%) օբյեկտներ են:

3.5 **Մայրաքաղաք Երևանը** ամենախոշորն է բնակչության թվաքանակով, ներառում է 12 թաղեր՝ ընդգրկելով հանրապետության բնակչության մեկ երրորդը և 50-ից ավելի անգամ գերազանցում է բնակչության խտության միջին հանրապետական ցուցանիշը:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 17168 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 13 հազար անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 90,4%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության, անշարժ գույքի գործառնությունների, վարձակալության, կոմերցիոն գործունեության և շինարարության (85,2%) օբյեկտներ են:

3.6 **Լոռու մարզի (կենտրոն՝ ք.Վանաձոր)** կազմում են ներառված 8 քաղաքներ և 122 գյուղեր՝ զբաղեցնում է հանրապետության տարածքի 12,7%: Քաղաքային բնակչությունը գերակշռում է՝ ընդհանուրի 67,5%:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 2424 տնտեսավարող սուբյեկտներ և 2474 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 85,6%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և շինարարության (74,6%) օբյեկտներ են:

3.7 **Կոտայքի մարզը (կենտրոն՝ ք.Հրազդան)** ներառում է 7 քաղաքներ և 62 գյուղեր, զբաղեցնում է հանրապետության տարածքի 7%-ը, բնակչության 62% ապրում է քաղաքներում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 2869 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 2565 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 89,2%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսության (75,2%) օբյեկտներ են:

3.8 **Շիրակի մարզի (կենտրոնը՝ ք. Գյումրի)** կազմում են գտնվում 3 քաղաքներ և 128 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 9%-ը, բնակչության 67,6% բնակվում է քաղաքներում, որից 59%՝ Գյումրի քաղաքում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 1761 տնտեսավարող սուբյեկտներ և 1549 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 83,3%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և շինարարության (73,1%) օբյեկտներ են:

3.9 **Մյունիքի մարզը (կենտրոնը՝ ք. Կապան)** ներառում է 7 քաղաքներ և 128 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 15%-ը և ամենաքաղաքաբնակն է Երևանից հետո՝ քաղաքային բնակչությունը կազմում է 70,6%:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 1727 տնտեսավարող սուբյեկտներ և 2049 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 89%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսության (75,7%) օբյեկտներ են:

3.10 **Վայոց Ձորի մարզը (կենտրոնը՝ ք. Եղեգնաձոր)** ներառում է 3 քաղաքներ և 52 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 7,8%-ը, բնակչության մոտ 59% բնակվում է գյուղական վայրերում:

1997 թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված էին 425 տնտեսավարող սուբյեկտներ և 746 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 83,3%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսության (69,4%) օբյեկտներ են:

3.11 **Տավուշի մարզը (կենտրոնը՝ ք. Իջևան)** ներառում է 4 քաղաքներ և 61 գյուղական վայրեր, զբաղեցնում է ՀՀ տարածքի 9%-ը, բնակչության մոտ 60% բնակվում է գյուղական վայրերում:

1997թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են 985 տնտեսավարող սուբյեկտներ և ևս 1166 անհատ ձեռներեցներ: Ձեռնարկությունների 89%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականությամբ գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և շինարարության (80%) օբյեկտներ են: